ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Քաղաքական գիտության ու քաղաքականության հետ առնչվող այլ գիտակարգերի ուսումնասիրության խնդրային դաշտում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իշխանության հիմնահարցը: Իշխանությունը քաղաքականության առանցքն է, այն հայեցակարգային դիտակետը, որի պրիզմայով էլ քննարկվում են քաղաքականության մնացած բոլոր հիմնահարցերը: Քաղաքական գիտությունների խնդրային դաշտում նման կարևոր դերակատարումը, իր հերթին, հասարակական-քաղաքական մտքի պատմական զարգացման բոլոր փուլերում հետազոտողների ուշադրությունը բևեռել է իշխանության ծագման և զարգացման, դրա իրականացման տարբեր մեխանիզմների բացահայտման հարցերի վրա: Պատահական չէ, որ այսօր քաղաքական գիտության համատեքստում շրջանառվում են իշխանության ավելի քան 300 սահմանումներ, տասնյակից ավելի հայեցակարգեր, որոնք անդրադառնում են իշխանության երևույթի տարբեր կողմերին: Սակայն, մյուս կողմից, իշխանության բնույթի բացահայտման, նրա ծագման և մեկնաբանման տեսությունների պատմական էվոլյուցիայի համատեքստում անհնար է չնկատել այն հարացուցային տեղաշարժը, որ տեղի է ունեցել վերջին ժամանակաշրջանում քաղաքագիտության մեջ: Խոսքը հատկապես վերաբերում է իշխանության երևույթի մեկնաբանություններին, որոնք կարելի է անվանել իշխանության «երկխոսութային» տեսություններ: Մասնավորապես, այդ տեսությունների համատեքստում իշխանության երևույթը բավարար չէ բացատրել միայն պարզ տիրապետության և ենթակայության հարաբերությունների տեսքով, հրաման-ենթարկում կառուցակարգով կամ էլ դիմադրության տեսության դիրքերից: Իշխանության իրականացման գործընթացն իրականում ավելի բարդ սոցիալական հարաբերություններ է ենթադրում, որը պահանջում է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև առնվազն նվազագույն համաձայնություն, օբյեկտի կողմից սուբյեկտին իշխելու իրավունքի ընդունում: Այս համատեքստում որոշակիորեն փոխվում է նաև իշխանության իրականացման ողջ փիլիսոփայությունը, որտեղ արդեն իշխանության «երկխոսութային» հարացույց ձևակեր-

պումը կարող է այնքան էլ «խորթ» չթվալ, դեռ ավելին՝ որոշակիորեն հավակնել գոյության իրավունքի: Ընդ որում, իշխանության մեկնաբանման և՛ համակարգային, և՛ վարքաբանական, և՛ ռեյացիոն հայեցակարգերում կան տեսություններ, որոնք իրենց շարադրման տրամաբանությամբ մոտ են «երկխոսութային» հարացույցին:

Ինչպես արդեն նշվեց, առաջին հայացքից «իշխանության երկխոսութային հարացույց» անվանումը խիստ հարաբերական կարող է թվալ, քանի որ երկխոսությունը, այնուամենայնիվ ենթադրում է կողմերի իրավահավասարություն և հաղորդակցական համաչափություն, իսկ իշխանության իրականացման գործընթացն անհնար է կյանքի կոչել լիակատար համաչափության դեպքում, քանի որ իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև ձևավորված իշխանական հարաբերությունների համաչափության դեպքում, ըստ Պ. Բլաուի, հավասար ուժերի փոխկապակցվածությունն ու փոխազդեցությունը ցույց են տալիս իշխանության բացակայությունը[1], իսկ ըստ Չ. Միլսի՝ «...երբ բոլորը հավասար են, ապա չկա քաղաքականություն, քանի որ քաղաքականությունը պահանջում է ենթականեր և ղեկավար»[2]:

Ռուս հեղինակ Վ. Լեդյանը շատ ճիշտ է նկատում, որ դժվար է դասակարգել իշխանության մեկնաբանման բոլոր արժանահիշատակ հայեցակարգերը, քանի որ դրանք կատարվում են տարբեր հիմքերի և չափանիշների հիման վրա[3]: Այնուամենայնիվ, ըստ նրա, իշխանության հայեցակարգային վերլուծության համատեքստում հստակ նկատվում են երկու հիմնական ավանդույթներ: Առաջինը, որի արմատները գալիս են Թ. Հոբսից ու Մ. Վեբերից, երբեմն անվանում են նաև «սեկցիոն» կամ ռեալիզմի ավանդույթ, որտեղ իշխանությունը դիտարկվում է անհամաչափ հարաբերությունների տեսքով՝ միաժամանակ ներառելով իրական կամ պոտենցիալ կոնֆլիկտ անհատների միջև[4]: Համաձայն այս մոտեցման՝ իշխանական հարաբերություններ ձևավորվում են, երբ սուբյեկտներից մեկը միակողմանի ազդելու հնարավորություն է ձեռք բերում՝ հաղթահարելով մյուսի դիմադրությունը: Իշխանությունն այս դեպքում, ինչպես նշում է Վ. Լեդյանը, վերածվում է «զրոյական գումարով» հարաբերության, որտեղ որոշ անհատների կամ խմբերի իշխանության աճը համապատասխանաբար հանգեցնում է մյուս խմբերի կամ անհատների իշխանության կրճատման[5]: Այս մոտեցումն է, ըստ էության, ընկած իշխանության ռեյացիոն հայեցակարգի շրջա-

---

[1] Տե՛ս **Blau P.** Exchange and Power in Social Life, New York, John Wiley and Sons, Inc, 1964, էջ 54:

[2] **Миллс Ч**. Властвующая элита. М.: "Иностранная литература", 1959, с. 148.

[3] Տե՛ս **Ледяев В**. Власть: концептуальный анализ. М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2001, էջ 28:

[4] Տե՛ս նույն տեղը:

[5] Տե՛ս նույն տեղը:

նակներում գործող «դիմադրության» տեսության հիմքում, որի տեսական հիմնավորումները ներկայացված են Դ. Քարթրայթի[6], Յ. Ֆրենչի և Բ. Ռեյվենի[7], ինչպես նաև այլ հեղինակների աշխատություններում: Ընդհանրապես, պետք է նշել, որ քաղաքագիտության մեջ բավականին շատ են իշխանության երևույթի մեկնաբանման այսպես կոչված կոնֆլիկտաբանական սահմանումները, որոնք կոնֆլիկտային շահերի առկայությունը կամ դրանց հավանականությունը դիտարկում են որպես իշխանական հարաբերությունների ձևավորման կարևոր նախապայման: Մասնավորապես, ամերիկյան քաղաքագետ Ռոբերտ Դալն իշխանությանը տված հայտնի սահմանման մեջ (որը նույնպես կարելի է համարել կոնֆլիկտաբանական հարացույցի դասական օրինակ) նշում է, որ «եթե բոլորը համաձայն լինեին նպատակներին հասնելու միջոցների ընտրության հարցում, ապա կարիք չէր զգացվի ուրիշների վարքագիծը փոխելու, հետևաբար չէին ձևավորվի նաև իշխանական հարաբերություններ»[8], քանի որ, ըստ Ռ. Դալի, «Ա-ն իշխանություն ունի Բ-ի վրա այնքանով, որքանով կարող է ստիպել Բ-ին անել այն, ինչն այլ պարագայում Բ-ն երբեք չէր անի»[9]: Հ. Լասսուելն ու Ա. Կապլանը նույնպես, իշխանության երևույթին մոտենալով վարքաբանական (բիհևիորիստական) տեսության դիրքերից, այն դիտարկում են որպես ուրիշների գործողությունների վրա ազդելու գործընթաց, որն անհնազանդության դեպքում իրականանում է խիստ միջոցների կիրառման կամ կիրառման սպառնալիքի շնորհիվ[10], քանի որ հենց սանկցիաների սպառնալիքով է, որ իշխանությունը տարբերվում է ուղղակի ազդեցությունից:

Իշխանության հայեցակարգային վերլուծության երկրորդ՝ «ոչ սեկցիոն» ավանդույթը իշխանության իրականացման գործընթացում ավելի շատ կարևորում է համընդհանուր շահերի բավարարման հանգամանքը՝ մերժելով «զրոյական գումարի» գաղափարը[11]: Այդ դեպքում արդեն իշխանությունը դիտարկվում է որպես կոլեկտիվ ռեսուրս, որպես հանրային բարեկեցության հասնելուն միտված համակարգի ունակություն՝ ընդգծելով իշխանության լեգիտիմ բնույթը, իշխանության պատկանելությունը ոչ թե առանձին անհատների, այլ մարդկանց կոլեկտիվ խմբերին կամ հասարակությանն ամբողջությամբ: Թեև իշխա-

---

[6] Տե՛ս **Cartwright D.** A Field Theoretical Conception of Power // Studies in Social Power / ed. by D. Cartwright. Ann Arbor, 1959, էջք 183–220:

[7] Տե՛ս **French J., Raven B**. The bases of social power // Studies in Social Power / ed. by D. Cartwright. Ann Arbor, 1959.

[8] **Dahl R**. Modern Political Analysis. 2nd ed. Englewood Cliffs (New Jersey): Prentice Hall. 1970, p. 59.

[9] **Dahl R**. The Concept of Power. // Political Power: A Reader in Theory and Research. New York, The Free Press, 1969, p. 80.

[10] Տե՛ս **Lasswell H., Kaplan** A. Power and Society. New Haven: Yale University Press. 1950, էջ 76:

[11] Տե՛ս **Ледяев В**., նշվ. աշխ., էջ 28:

նության ռեալիստական մեկնաբանություններն ավելի գերակշռող են, այնուամենայնիվ քիչ չեն նաև երկրորդ ավանդույթի հետևորդները՝ իշխանությունը «փոփոխական գումարային» մոդելով ներկայացնողները: Այդ ուղղության ներկայացուցիչներից հատկապես կառանձնացնեինք Թ. Պարսոնսին[12], Հ. Արենդին[13], Մ. Ֆուկոյին[14], Մ. Կրոզյեին[15] և այլոց:

Մասնավորապես, Թ. Պարսոնսը, քննադատելով իշխանության մեկնաբանման ավանդական մոտեցումը, գտնում էր, որ այն օրգանապես կապված է «զրոյական գումարի» հայեցակարգի հետ, որտեղ «իշխանության քանակն» ի սկզբանե ամրագրված է, հետևաբար սուբյեկտներից մեկի իշխանության ավելացումը ավտոմատ կերպով նշանակում էր նույն չափով մյուս սուբյեկտների իշխանության նվազում[16]: Այս մոտեցումը, ըստ Թ. Պարսոնսի, այնքան էլ կիրառելի չէ բարդ համակարգերի դեպքում, ինչպիսին է, օրինակ, հասարակության քաղաքական համակարգը: Բացի դրանից, նա իշխանության երևույթին մոտենում էր ոչ թե ռելյացիոն հայեցակարգի տեսանկյունից, դիտարկելով այն որպես մարդկանց միջև միջանձնային հարաբերությունների տարատեսակ, այլ ընդհակառակը՝ համակարգային տեսության դիրքերից՝ իշխանությունը սահմանելով որպես կոլեկտիվ նպատակներին հասնելուն ուղղված համակարգի ունակություն[17]: Պարսոնսի համոզմամբ՝ «իշխանության քանակն» այս դեպքում ոչ թե «զրոյական գումարով» տեսք ունի, այլ նրա ծավալը կարող է փոխվել, ինչպես օրինակ՝ տնտեսության վարկավորման դեպքում: Մարդիկ «ներդնում» են իրենց վստահությունն այն մարդկանց մեջ, ովքեր կառավարում են՝ այսպիսիով նույնպես օգտվելով իշխանության իրականացման գործընթացից, քանի որ իշխանությունը ապահովում է կոլեկտիվ նպատակներ:

Եթե Թ. Պարսոնսը քննադատում է իշխանության իրականացման «զրոյական գումարով» հայեցակարգը, ապա Հ. Արենդը վիճարկում է իշխանության անհամաչափ բնույթն ընդհանրապես: Նրա համոզմամբ՝ մարդը տիրապետում է միայն իրեն բնորոշ հաղորդակցության յուրահատուկ կառուցակարգով, որտեղ իշխանությունը չի կարող անհատական բնույթ ունենալ. այն գոյություն ունի այնքան ժամանակ, որքան գործում է սոցիումը: Ըստ նրա՝ իշխանական հարաբերությունները ձևավորվում են հավասար սուբյեկտների միջև հաղորդակցական

---

[12] Տե՛ս **Parsons T**. Power and the Social System // Power/ed. By S. Lukes. Oxford: Blackwell, 1986, էջք 96-143:

[13] Տե՛ս **Arendt H**. Communicative Power // Power/ed. By S. Lukes. Oxford: Blackwell, 1986, էջք 59-74:

[14] Տե՛ս **Фуко М.** Интеллектуалы и власть. Избранные политические статьи, выступления и интервью. М., 2002:

[15] Տե՛ս **Комоцкий Б.** Мишель Крозье как политолог // "Социально-политические науки", 1990, № 9, էջ 94:

[16] Տե՛ս **Parsons T.,** նշվ. աշխ., էջ 95:

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 103:

գործընթացում: Ընդ որում, իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև ձևավորված հաղորդակցությունն անպայման երկկողմանի է, որն իր հերթին պահանջում է, որ հաղորդակցության մասնակիցները՝ և՛ «խոսողները», և՛ «լսողները», անընդհատ բանավիճեն և երկխոսեն: Հ. Արենդի համոզմամբ՝ իշխանությունը ծագում է, երբ «հավասարները հավաքվում են մեկտեղ, որը համապատասխանում է մարդկային ունակությանը ոչ միայն գործելու, այլև գործելու համատեղ»[18] :

Իսկ ֆրանսիացի քաղաքագետ Միշել Կրոզյեն, իշխանությունը համարելով միջանձնային հարաբերություն, որը թույլ է տալիս մի անհատի ազդել մեկ ուրիշի կամքի և վարքագծի վրա, բացահայտում է բանակցությունների երևույթը, որը, նրա կարծիքով, փոխակերպում է այդ հարաբերությունների իմաստն ամբողջությամբ: «Երբ մենք իշխանությունը դիտարկում ենք ոչ թէ Ա-ի և Բ-ի միմյանց վրա ազդելու անհատական կարողություն, այլ որպես Ա և Բ կողմերի միջև զարգացում ապրող հարաբերություն, ապա բացահայտում ենք բանակցությունների երևույթը:... Իշխանության յուրաքանչյուր երևույթ, ինչպիսին էլ լինեն նրա ակունքները, օրինականության աստիճանը, իրականացման մեխանիզմները, նպատակներն ու մեթոդները, նշանակում է որևէ անհատի կամ խմբի ազդեցության հնարավորություն մեկ այլ անհատի կամ խմբի վրա»[19],- կարծում է հեղինակը: Իրոք, դժվար է ժխտել այն փաստը, որ մարդկային յուրաքանչյուր քիչ թե շատ կայուն, շարունակական հարաբերություն ենթադրում է փոխադարձ շփումների և հարմարվելու բարդ համակարգ: Իշխանությունն ինքնին գոյություն ունենալ չի կարող: Ինչպես նշում է Մ. Կրոզյեն, «իշխանական հարաբերությունները հաստատվում են միայն այն ժամանակ, երբ կողմերը ինտեգրված են, թեկուզև ժամանակավորապես, կազմակերպված ամբողջության մեջ»[20]: Ըստ նրա՝ մարդիկ կարող են հասնել կոլեկտիվ նպատակների միայն իշխանական հարաբերությունների իրականացման շնորհիվ, և ընդհակառակը՝ որևէ մեկի իշխանությունը մյուսի նկատմամբ հնարավոր է միայն նույն կոլեկտիվ նպատակների իրագործման գործընթացում, որն էլ ուղղակիորեն պայմանավորում է բանակցությունների անհրաժեշտությունը[21]: Նույնը նկատում ենք իշխանական հարաբերություններում, որտեղ իրենց արտահայտությունն են գտնում քաղաքականության տարբեր սուբյեկտների, անձանց, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների, պետությունների փոխհարաբերություններում իշխանության կիրառման կապերը[22]:

---

[18] Տե՛ս **Arendt H**., նշվ. աշխ., էջ 64:
[19] Հղումն ըստ՝ **Комоцкий Б.,** նշվ. աշխ., էջ 94:
[20] Նույն տեղում, էջ 95:
[21] Տե՛ս նույն տեղը, էջ 96:
[22] Տե՛ս **Халипов В**. Власть: основы кратологии. М., 1995, էջ 123:

«Իշխանական հարաբերությունները փոխադարձ են. եթե իշխանության սուբյեկտը՝ Ա-ն, կարող է հասնել այն բանին, որ օբյեկտը՝ Բ-ն, անի այն, ինչը նա չէր անի առանց Ա-ի ազդեցության, ապա, հավանական է, որ Բ-ն նույնպես, իր հերթին, հնարավորություն ունի ազդելու վերջինիս վրա»[23], գրում է Կրոզյեն: Ըստ այդմ էլ, նա ամերիկյան քաղաքագետ Ռոբերտ Դալի՝ իշխանությանը տված հանրահայտ սահմանումը մեկնաբանում է այսպես. «Ա-ի իշխանությունը Բ-ի նկատմամբ համապատասխանում է Ա-ի հնարավորությանը Բ-ի հետ բանակցություններում հասնելու իր համար լավագույն պայմանների»[24]: Այս մոտեցումն իր բովանդակությամբ արդեն «երկխոսութային» կարելի է համարել, քանի որ իշխանության իրականացման գործընթացի կրոզյեական մեկնաբանությունը ենթադրում է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև բանակցությունների անընդհատ շղթա, որտեղ սուբյեկտի և օբյեկտի կարգավիճակում հանդես եկող քաղաքական դերակատարների տեղերը անընդհատ կարող են փոխվել, ինչն էլ ի ցույց է դնում իշխանության ունիվերսալ հատկություններից մեկի՝ փոխակերպական (ինվերսիոն) հատկանիշի կարևորությունը իշխանության իրականացման գործընթացում:

Միաժամանակ, իշխանության իրականացումը միշտ ենթադրում է գործողությունների համալիր, որոշակի ռազմավարական և մարտավարական պլանավորում: Հետևաբար, հարց կարող է առաջանալ. Որքանո՞վ են կիրառելի իշխանության իրականացման ռազմավարությունները երկխոսութային հարացույցի համատեքստում: Նախ նշենք, որ իշխանության իրականացման ռազմավարություն ասելով հասկանում ենք իշխանության կողմից սահմանված նպատակներին ուղղված հիմնական միջոցների և մեթոդների ամբողջությունը: Այդ տեսանկյունից կարող ենք առանձնացնել «փափուկ» և «կոշտ» ռազմավարությունները, որոնցից առաջինը լիովին տեղավորվում է կոնֆլիկտային կամ ուժային, իսկ երկրորդը՝ «երկխոսութային» հարացույցի տրամաբանության մեջ: Օրինակ՝ «կոշտ ուժը» (hard power) սահմանվում է որպես այլ քաղաքական ուժերի վարքագծի կամ շահերի վրա ազդելու քաղաքական իշխանության իրականացման այնպիսի ձև, որի դեպքում կիրառվում են ռազմական և/կամ տնտեսական պարտադրման մեխանիզմներ[25]: «Կոշտ ուժի» հաշվարկման առավել ճշգրիտ չափորոշիչներից է այսպես կոչված CINC ինդեքսը (Composite Index of National Capability), որը բաղկացած է վեց հիմնական պարամետրերից՝ 1. պետության բնակչության թվաքանակը (TPR), 2. քաղաքային բնակչութ-

---

[23] **Комоцкий Б.,** նշվ. աշխ., էջ 95:

[24] **Мшвениерадзе В**. и др. Власть. Очерки современной политической философии Запада. М., 1989, с. 84.

[25] Տե՛ս «Definition of hard power» [հասանելի է՝ http://www.oxforddictionaries.com/definition/english/hard-power]

յան թվաքանակը (UPR), 3. պողպատի և երկաթի արտադրության քանակը (ISR), 4. էներգառեսուրսների սպառման ծավալը (ECR), 5. զինված ուժերի թվաքանակը (MPR), 6. ռազմական ծախսերի ծավալը (MER)[26]: «Կոշտ ուժի» քաղաքականությունը այսօր էլ և՛ միջազգային հարաբերություններում, և՛ շատ պետությունների ներքին քաղաքականության կազմակերպման գործում շարունակում է մնալ առավել հաճախ կիրառվող ռազմավարություններից մեկը: Սակայն, միաժամանակ, հարկ է նշել, որ նկատելի է նաև որոշակի տեղաշարժ. հատկապես XX դարի 90-ականներից սկսած՝ պետության արտաքին քաղաքական դրական կերպարի, իշխանությունների լեգիտիմության ու արդյունավետության բարձրացման համար գնալով ավելի հաճախ են կիրառվում ազդեցության այսպես կոչված «փափուկ» ռազմավարությունները:

Առաջիններից մեկը, որը տեսականորեն հիմնավորեց և գործնականորեն լայն շրջանառության մեջ դրեց «փափուկ ուժի» հայեցակարգը, ամերիկյան գիտնական, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջոզեֆ Նայն էր, որը այն սահմանում է որպես ուրիշների վրա ազդելու կարողություն, որին հնարավոր է հասնել սեփական գրավչությունն ի ցույց դնելու և համոզելու շնորհիվ[27]: Հետագայում նա շրջանառության մեջ դրեց նաև «խելամիտ ուժի» (smart power) գաղափարը՝ սահմանելով այն որպես արդյունավետ իշխանական ռազմավարություն, որը համատեղում է «կոշտ» և «փափուկ» ուժի ռեսուրսները[28]: Իհարկե, Ջ. Նայը նույնպես կարծում է, որ արդի միջազգային հարաբերություններում «կոշտ ուժը» ամենևին էլ չի կորցրել իր առանցքային նշանակությունը, իսկ վերպետական այնպիսի խմբեր, ինչպիսիք են ահաբեկչական խմբավորումները, քաղաքական պայքարի մեթոդաբանության ընտրության հարցում հիմնականում դիմում են բռնության, այնուամենայնիվ «փափուկ ուժը» գնալով ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում ոչ միայն ահաբեկչությանը հարողների շրջանակը սեղմվելու, այլև հակաահաբեկչական կոալիցաներ ձևավորելու և համերկրային խնդիրներ լուծելու դեպքում: Այս ամենը պահանջում է բազմակողմ համագործակցություն[29]:

Ըստ էության, որևէ պետության կողմից «փափուկ ուժի» ռազմավարության կիրառման հիմնական նպատակը տվյալ պետությանը կամ իշխանությանը ձգողականություն ու գրավչություն հաղորդելն է:

---

[26] Մանրամասն տե՛ս **Тимофеев О**. Концепты «власть» и «сила» в зарубежной науке о международных отношениях // "Ученые записки", 2011, № III-2(7), էջ 29:

[27] Տե՛ս **Най Дж.** Гибкая сила. Как добиться успеха в мировой политике. М.: "Тренд", 2006, էջ 2, **Nye, Joseph** Soft Power: The Means to Success in World Politics, New York: Public Affairs, 2004:

[28] Տե՛ս **Nye J.** The future of Power, New York, Public Affairs, 2011, էջ 23:

[29] Տե՛ս **Най Дж**. «Мягкая сила» и американо-европейские отношения // "Свободная мысль – XXI", 2004, № 10, էջ 34:

Այս նպատակին, ըստ Ջ. Նայի, հնարավոր է հասնել օգտագործելով տեղեկատվության և իմիջային կերպարների իշխանությունը: «Փափուկ ուժը» ձևավորվում է մի շարք գործոնների ազդեցությամբ, որոնցից ամերիկացի գիտնականը նախևառաջ առանձնացնում է տվյալ երկրի մշակույթը, պետության դավանած քաղաքական արժեքները, արտաքին քաղաքականությունը, որոնք նպաստում են միջպետական հաղորդակցության հիմնական մասնակիցների միջև ընդհանուր արժեքային համակարգի ձևավորմանը: Որպես հաջողված օրինակ Նայը նշում է Եվրոպայի նկատմամբ ամերիկյան «Մարշալի պլանի» իրագործումը, որի ընթացքում եվրոպացիները կամավոր ընդունեցին ամերիկյան առաջնորդությունը[30]:

Իհարկե, «փափուկ ուժի» եզրութաբանական և բովանդակային մշակումը նախևառաջ ամերիկյան քաղաքագիտական դպրոցինն է, որը, սակայն, ամենևին չի նշանակում, որ կա միայն ամերիկյան «փափուկ ուժ»: Նույն Նայը խոսում է եվրոպական «փափուկ ուժի» մեծ ներուժի մասին՝ այն համարելով ամերիկյան «փափուկ ուժի» հիմնական մրցակիցն աշխարհում[31]: Նրա կարծիքով, եվրոպական մշակույթը, արվեստն ու գրականությունը, երաժշտությունն ու խոհանոցը ամբողջ աշխարհում մեծ հետաքրքրության ու բարեհաճ վերաբերմունքի են արժանանում, ինչը «փափուկ ուժի» տեսանկյունից մեծ գրավչություն է հաղորդում Եվրոպային: Բացի դրանից, արտաքին քաղաքականության մեջ Եվրոպայի որդեգրած ավելի փափուկ մոտեցումները, բազմակողմ դիվանագիտական ջանքերը, շրջակա միջավայրի պահպանման նախաձեռնությունները դրականորեն են ազդում միասնական Եվրոպայի արտաքին քաղաքական կերպարի ձևավորման վրա: Նայի դիտարկման համաձայն՝ եվրոպական ոչ մի երկիր առանձին վերցրած, ԱՄՆ-ի հետ չի կարող մրցել, սակայն իր հավաքական ամբողջության մեջ Եվրոպական միությունը մեծ ներուժ ունի, որի «փափուկ ուժն» արդեն իր հնարավորություններով համեմատելի է ամերիկյանին:

Ամերիկյան «փափուկ ուժի» հետ լիովին կարող է մրցակցել նաև այդ ուղղությամբ մշակվող չինական ռազմավարությունը, որը համարվում է ներկայիս չինական բարձրագույն ղեկավարության հռչակած արտաքին քաղաքական կարևոր ռազմավարական ուղղություններից մեկը: Չինաստանի կոմունիստական կուսակցության XVII համագումարում հրապարակված քաղաքական զեկույցում չինական «փափուկ ուժի» նպատակադրված շինարարության համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները[32]. 1. ստեղծել առանցքային սոցիալիստական արժեքների համակարգ, 2. ձևավորել ներդաշնակ մշակույթ, դաստիարա-

---

[30] Տե՛ս նույն տեղը, էջ 35:

[31] Տե՛ս նույն տեղը:

[32] Տե՛ս **Русакова О**. Дискурс Soft Power во внешней политике // "Вестник ЮУрГУ": Серия "Социаьно-гуманитарные науки", 2012, № 32, էջ 120:

կել քաղաքակրթական բարքեր, 3. լայնորեն տարածել ազգային մշակույթը, կառուցել չինական ազգի ընդհանուր հոգևոր օջախը, 4. առաջ մղել նորարարությունը մշակույթում, հզորացնել մշակույթի զարգացման կենսական ներուժը: Ինչպես նշում է Օ. Ռուսակովան, չինական «փափուկ ուժի» հիմնական առանձնահատկությունը ներդաշնակության սկզբունքն է, որը տարածվում է հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ ներառելով մարդ-բնություն, մարդ-հասարակություն և պետությունների միջև ներդաշնակ հարաբերությունների հաստատումը[33]: Ըստ չինացի մասնագետների՝ ներքին քաղաքականության մեջ չինական «փափուկ ուժը» նպաստում է ազգային ոգու բարձրացմանը, չինացի ժողովրդի հավաքական ինքնության ամրապնդմանը, երկրի միասնականությանը, հին չինական մշակույթի պահպանմանն ու զարգացմանը: Իսկ արտաքին քաղաքականության ոլորտում Չինաստանի որդեգրած «փափուկ ուժի» ռազմավարությունը նպաստում է միջազգային հարաբերություններում երկրի ազդեցության ավելացմանն ու ժողովուրդների միջև փոխըմբռնման ամրապնդմանը[34]:

Ռուսաստանյան հասարակական-քաղաքական դիսկուրսում նույնպես վերջին ժամանակներս ակտիվացել են «փափուկ ուժի» վերաբերյալ ուսումնասիրությունները[35]: Այդ մասին պետական ամենաբարձր մակարդակով խոսեց ՌԴ նախագահ Վ. Պուտինը 2012 թ. հուլիսի 9-ին դեսպանների և մշտական ներկայացուցիչների հետ խորհրդակցության ժամանակ: Իր ելույթում ՌԴ նախագահը մատնանշեց պետության արտաքին քաղաքականության հիմնական առաջնահերթություններն ու խնդիրները՝ առաջարկելով ռուս դիվանագետներին իրենց աշխատանքներում կիրառել նաև «փափուկ ուժի» միջոցները: Վ. Պուտինի կարծիքով՝ «փափուկ ուժը» ենթադրում է շահերի և մոտեցումների առաջ մղում սեփական երկրի գրավչության և համակրանքի ճանապարհով՝ հենվելով ոչ միայն նյութական, այլ նաև մշակութային և ինտելեկտուալ ոլորտների ձեռքբերումների վրա[36]: Ամենևին չժխտելով ազգային-պետական շահերի սպասարկման գործում դիվանագիտական աշ-

---

[33] Տե՛ս նույն տեղը:

[34] Տե՛ս **Цзайци Лю.** «Мягкая сила» в стратегии развития Китая // «ПОЛИС», № 4, 2009, էջ 150:

[35] Տե՛ս **Пономарева Е.** Железная хватка «мягкой силы» // http://www.mgimo.ru/news/ experts/document238257, **Паршин П.** Проблематика «мягкой силы» во внешней политике России. Аналитические доклады // Центр глобальных проблем МГИМО: "Университет", март 2013, выпуск 1 (36), **Филимонов Г. Ю.** Актуальные вопросы формирования стратегии «мягкой силы» во внешней политике Российской Федерации // "Закон и право", 2013, № 9, **Наумов А**. «Мягкая сила» и внешнеполитический имидж Российской Федерации // http:// www.perspektivy.info/rus/gos/magkaja sila i vneshnepoliticheskij imidzh rossijskoj federacii 2015 -03-30.htm, **Студнева Е**. МИД и Общественная палата России обсудили ресурсы «мягкой силы»1 (13.12.2011) // "Международная жизнь" http://interaffairs.ru/read.php? item=8129.)

[36] Տե՛ս «Выступление президента России на совещании послов и постоянных представителей Российской Федерации» // http://www.kremlin.ru/transcripts/15902:

խատանքի իրականացման ավանդական մեթոդները, Վ. Պուտինը կոչ էր անում յուրացնել և լայնորեն կիրառել նաև «փափուկ ուժի» տեխնոլոգիաները[37]:

Այդ տեսանկյունից «փափուկ ուժի» ռազմավարության ներուժը լիովին բացահայտելու և գործնականում կիրառելու առավել արդյունավետ մեթոդներից են հանրային դիվանագիտությունը, երկխոսութային հաղորդակցման նոր խողովակների և հարթակների ստեղծումը, որոնք ենթադրում են երկարաժամկետ փոխհարաբերությունների հաստատում, արտաքին քաղաքականության իրականացման բարենպաստ պայմանների և միջավայրի ձևավորում[38]: Ռուսաստանի նախաձեռնությամբ ստեղծված և գործող միջազգային մասշտաբի այդպիսի երկխոսութային հարթակներից կարելի է նշել «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային հասարակական հիմնադրամը[39], «Արևելք-Արևմուտք երկխոսություն» մշակութային - տնտեսական համաժողովը[40], «Պետերբուրգյան երկխոսությունը»[41], «Եվրասիական երկխոսությունը»[42], «Ա. Գորչակովի անվան հանրային դիվանագիտության աջակցման հիմնադրամը»[43] և այլն:

Այդ հարթակներում և համաժողովներում քննարկվում են միջազգային հարաբերությունների արդիական հիմնահարցերը: Ըստ ռուս մասնագետ Է. Կոչետովի՝ այդ հարթակներում ձևավորվում է բարձր ինտելեկտուալ մտքի մի ամբողջ երկխոսութային ցանց, որի երաշխավորությունների հետ հաշվի են նստում համաշխարհային հիմնական լիդերներն ու կառույցները[44]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ և՛ իշխանության բնույթի մեկնաբանման, և՛ իշխանության իրականացման ռազմավարությունների ընտրության հարցում նկատելի են որոշակի հարացուցային տեղաշարժեր: Մասնավորապես, իշխանության ֆենոմենը կարելի է ներկայացնել և լուսաբանել ոչ միայն «զրոյական», այլև «փոփոխական» գումարային ելքերի տեսքով՝ երկխոսութային հարացույցի համատեքստում այն դիտարկելով որպես իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև շարունակական երկխոսության գործընթաց:

---

[37] Տե՛ս նույն տեղը:

[38] Տե՛ս **Галстян Х.** Smart Power в российской внешней политике: время благоразумной силы // "Управление в XXI веке": сборник статей по материалам Международной научно-практической конференции. НИУ «БелГУ», 23 октября 2015 года, 2015, էջ 45:

[39] Տե՛ս «World Public Forum "Dialogue of Civilizations"» [www.wpfdc.org]

[40] Տե՛ս «Культурно-деловой форум “Диалог Восток-Запад”» // http://art-baden.com/

[41] Տե՛ս «Петербургский диалог» // http://petersburger-dialog.ru/

[42] Տե՛ս **Галстян Х.** Армяно-российские взаимоотношения в контексте евразийского диалога // "Внешняя политика Республики Армения. Проблемы и вызовы". Материалы научно-практической конференции. Ер., 2014, էջ 108-116:

[43] Տե՛ս «Фонд поддержки публичной дипломатии им. А. Горчакова» // www. gorchakov fund.ru

[44] Տե՛ս **Кочетов Э.** Диалог: диалогистика как наука о судьбах человека и мира в контексте глобальных перемен. М., 2011, էջ 68:

Նույնը վերաբերում է նաև իշխանության իրականացման ռազմավարություններին: Մասնավորապես, ինչո՞ւ ենք հակված «փափուկ» իշխանական ռազմավարությունը ներկայացնելու որպես երկխոսութային. նախևառաջ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իշխանությունն իր առջև դրված նպատակներին հասնելու համար ընտրում է բացառապես խաղաղ միջոցներ: Երկրորդ՝ «փափուկ ուժի» հայեցակարգը ենթադրում է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև որոշակի համաձայնություն՝ կոնսենսուս, ինչն ավելի շուտ հնարավոր է հաստատել հենց քաղաքական հաղորդակցման երկխոսութային տեխնոլոգիաների միջոցով: Երրորդ՝ ապահովում է որոշակի գաղափարների, ինչու չէ՝ նաև մշակույթների միջև մրցակցություն, որը թույլ է տալիս ինչպես միջպետական հարաբերությունների, այնպես էլ ներքաղաքական հաղորդակցման սուբյեկտներին ընտրել իրենց շահերին համապատասխանող լավագույն գաղափարներն ու մտքերը: Չորրորդ՝ «փափուկ ուժի» ռազմավարությունը կիրառողի արժեքային «էքսպանսիան» պարտադրված և ստիպողական չէ, այլ ավելի շատ կամովին է, ինչն իր հերթին իշխանության գործողությունների լեգիտիմացման ավելի մեծ ներուժ է պարունակում: Բացի այդ, տեղեկատվական և հաղորդակցական հասարակությունների ձևավորմանը և զարգացմանը զուգահեռ՝ որոշակիորեն սահմանափակվում են նաև «կոշտ», ուժային ռազմավարության կիրառման հնարավորությունները, իշխանության ապակենտրոնացումն ու ցանցային կառավարման տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են ստեղծում իշխանության իրականացման հենց երկխոսութային ռազմավարությունների ներդրման և կիրառման համար:

Ժողովրդավարական անցման փուլում գտնվող երկրներում նույնպես հատկապես ներքաղաքական հարաբերություններում անցումը իշխանության իրականացման «փափուկ» ռազմավարություններին, մենախոսային քաղաքական հաղորդակցման կառուցակարգերի փոխարեն երկխոսութային տեխնոլոգիաների լայն կիրառման պրակտիկաները մեծապես կարող են ազդել ժողովրդավարական բարեփոխումների արագության, որակի ու արդյունավետության վրա:

Բանալի բառեր – *իշխանության երկխոսութային հարացույց, «փափուկ» ուժի ռազմավարություն, «կոշտ» ուժ, քաղաքական երկխոսութային տեխնոլոգիաներ, հարացուցային տեղաշարժեր*

ХАЧИК ГАЛСТЯН – ***Диалогическая парадигма власти.*** – Статья посвящена анализу различных концепций возникновения, истолкования и стратегий власти. Основная её цель – выявить парадигмальные сдвиги в политической теории и обосновать диалогическую парадигму власти. Разбираются традиционные и нетрадиционные концепции власти, раскрываются теоретические и концептуальные основы её диалогической парадигмы. Обосновывается идея, что по мере парадигмальных сдвигов меняется философия власти. Делается вывод, что с форми-

рованием и развитием информационного и коммуникационного общества значительно сокращается применение «жёстких» властных стратегий, а децентрализация власти и сетевые технологии управления открывают новые перспективы для внедрения диалоговых форм коммуникации.

Ключевые слова: *диалогическая парадигма власти, “мягкая” властная стратегия, “жёсткая” сила, диалоговые коммуникационные технологии, парадигмальные сдвиги*

KHACHIK GALSTYAN – *A Dialogical Paradigm of Power.* – The article is dedicated to the analysis of various concepts of the origin, interpretation, and strategies for power implementation. The main goal of the research is to identify the paradigm shifts in political theory and justify the relevance of the dialogical paradigm of power. In particular, author discusses the sectional and non-sectional concepts of power, considers the main power implementation strategies under the prism of a dialogical paradigm. Pointing to the limitedness of conflict theories of power the author substantiates that in modern conditions, as paradigm shifts, the whole philosophy of power is changing. The author concludes that in parallel with the formation and development of the information and communication society, the use of “hard” power strategies is significantly reduced. And the new trends of decentralization of the power and wild use of network management technologies, in turn, open up new perspectives for the implementation and application of dialogue strategies realization of power.

Key worlds: *dialogical paradigm of power, “soft” power strategy, “hard” power, dialogue communication technologies, paradigm shifts*

Ներկայացվել է՝ 31.01.2019, գրախոսվել է՝ 06.03.2019, ընդունվել է տպագրության՝ 26.04.2019